պահուած ur-me-ni անունն եւս վերաբերում է այն ժամանակները տակաւին Կապադովկիայում ապրող հայերին։ Այդ դէպքում մարացիք Arm-ini անունը խալդերից առած պիտի լինին, նրանցից էլ՝ պարսիկները եւ փոքրասիական յոյները։

Այս մեկնաբանութեամբ, շարունակում է Մ․, լոյս է սփռւում նաեւ Հայաստանի հնագոյն մայրաքաղաք Արմաւիր, ինչպէս նաեւ հայ նահապետ Արամ անունների վրայ։

Այս տեսակէտը հիմնաւորւում է նաեւ Մովսէս Խորենացու մէջ (Ա․ 14) պահուած մի առասպելով, ուր յիշատակւում է Արամը, եւ որը (առասպելը) մի ուրիշ վարկածն է այն առասպելի, որ առաջ է բերուած Հոմերոսի վերոյիշեալ հատուածի մէջ եւ ուր յիշատակուած է arim ցեղը։

Բաբելոնեան արձանագրութիւնների մէջ Հայաստանի համար գործածական է Ուրաշտու անունը, որ համապատասխանում է Ասորեստանեան Ուրարտու (գրանից էլ՝ Արարատ) անուան։

Այսպիսով, «Բաբելոնացիք շարունակել են պահել երկրի հին անունը նաեւ այն բանից յետոյ, երբ վաղուց արդէն փոխուել էին նրա տէրերը, մի խոշոր չափով նաեւ՝ բնակիչները»։

Ինչ վերաբերում է Ուրարտուի բնակիչների ցեղական անուան, նրանք իրենք զիրենք սեփական արձանագրութեանց մէջ խալդեր, խալդինի (խալդիս աստուծու մարդիկ) են անուանում։ «Նրանց լեզուն ոչ հայերէն է, ոչ էլ առհասարակ հնդեւրոպական, այլ հաւանօրէն «կովկասերէն»։

Եւ սակայն մինչեւ օրս տակաւին չէ ապացուցուած նրա մօտաւոր կապը՝ կովկասեան լեզուների մի յատուկ խմբակի հետ...

Ուրարտուի պետութիւնը զարգացման բարձր աստիճանի էր հասցրել մանաւանդ մետաղագործութիւնը եւ երկրի արուեստական ոռոգմանը ծառայող ջրանցքների կառուցումը։ Հռչակուած են յատկապէս՝ ժայռերի մէջ նրանց փորած բնակարանները, քարեայ սանդուխները, բերդերը եւ ջրանցքները, որ հայերը դեռ յետոյ էլ, մասամբ մինչեւ վերջերս, օգտագործել եւ բանուկ վիճակի մէջ են պահել։

Խալդերի պետութեան անկման պարագաները թէեւ հանգամանօրէն ծանօթ չեն մեզ, բայց հաւանօրէն Ռուզաս Գ․-ը իշխել է մինչեւ Հալիւսի ճակատամարտը (585 Թ․ Ք․ Ա․), որն եւ Փոքր Ասիայի գերիշխանութիւնը Մեդացիների ձեռքը տուաւ։

Ցամենայն դէպս անկասկածելի է, որ հայերը օգտագործել են խալդերի այդ աղէտը եւ անցել Եփրատը, որպէս մեդացիների դաշնակիցներ։

Հարկաւ, լուրջ կերպով չէ կարող խօսք լինել այն մասին, թէ հայերը նուաճել են Ուրարտուի պետութիւնը։ Ոչ թէ միանգամից, այլ քայլ առ քայլ է տեղի ունեցել գրաւումը այդ երկրի, որն եւ այդ ժամանակից սկսած մինչեւ օրս նրանց — հայերի — անունն է կրում իր վրայ։ Եւ ապա, հայերը միայն Երզնկայի եւ Էրզրումի վրայով չեն առաջ շարժուել դէպի Երասխի հովիտը, ինչպէս որ առաջին հայեացքից ենթադրել կարելի էր։

Ալեքսանդր Մեծի երկու պատմագիրներ, որոնք Թեսալիայից էին եւ կենդանի հետաքրքրութիւն էին ցոյց տալիս Հայաստանի նախապատմութեան հանդէպ, այն կարծիքն են յայտնում, թէ հայերը Եփրատն անցնելով եւ դէպի արեւելք դիմելով՝ առաջ են շարժուել երկու ուղղութեամբ։ Մէկ խումբը շարժուել է Եփրատի հոսանքն ի վեր եւ գրաւել Եկեղեաց գաւառը Երէզ (Երզնկա) գլխաւոր քաղաքով, իսկ միւս խումբը Դիվրիկից եւ Արաբկիրից դուրս գալով ու Եփրատն անցնելով առաջ է շարժուել Արածանիի (Մուրատ–Սու) հովտով եւ Խարբերդի վրայով։

Սակայն հայերը հոծ բազմութիւններով նստած չմնացին Խարբերդի դաշտում, այլ Արածանիի հոսանքով դէպի վեր շարժուեցին եւ հաստատուեցին յատկապէս Տարօնի (Մուշ) դաշտում։

Մի երրորդ ճիւղ էլ բնակութիւն հաստատեց Մայաֆարղինից հիւսիս գտնուող ներկայիս Լիճէ կոչուած վայրի մօտ գտնուող Ծուպրիա բնագաւառում, ուսկից եւ ասպատակեցին Կալախ եւ Աղխարինէ։ Աւելի ուշ նրանք մինչեւ իսկ Ասորեստանցիներից խլեցին Ամորիքը։

Է․ դարում Ք․ Յ․ Հայաստանի հարաւային բնագաւառները տարածւում էին անգամ մին-